ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Ժիրայր Վրեժի Դոիրգարյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներքին անվտանգության և հսկողության բաժնում որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (12.08.25թ.-12.02.26թ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. պետական համապատասխան կառույցների հետ համագործակցելով՝ ապահովել եմ զանգվածային լրատվամիջոցներում ՀՀ ՊՎԾ աշխատակիցների, ինչպես նաև Ծառայությանը վերաբերող այլ տեղեկությունների վերաբերյալ տեղեկատվության մշտադիտարկում,
2. ձեռնարկել եմ միջոցներ սոցիալական ցանցերում և զանգվածային լրատվամիջոցներում Ծառայության աշխատակիցների վերաբերյալ հնարավոր ապատեղեկատվության տարածումը կանխարգելելու ուղղությամբ,
3. հավաքագրել եմ տեղեկատվություններ, որոնք վերաբերել են Ծառայության աշխատակիցների բարեվարքությանը, կարգապահությանը և ներքին կանոնների պահպանմանը,
4. իրականացրել եմ ստուգումներ Ծառայության համապատասխան արտաքին ստուգող խմբի բարեվարքության և Ծառայությունից բխող այլ կարգապահական կանոնների պահպանման վերաբերյալ,
5. բաց աղբյուրների միջոցով ուսումնասիրել, համադրել և համապատասխան արձանագրություններ եմ կազմել աշխատակիցների հնարավոր շահերի բախման հավանականության մասին, դրանց վերաբերյալ առարկայական առաջարկներ ներկայացրել,
6. համագործակցել եմ հսկիչ-անցագրային կետի ծառայողների հետ՝ Ծառայության աշխատակիցների աշխատանքային անցուդարձը կանոնակարգելու և ի հայտ եկած խնդիրները լուծելու նպատակով,
7. Ծառայությանը պատկանող տեսանկարահանող սարքերի միջոցով մշտադիտարկում եմ իրականացրել ՀՀ ՊՎԾ վարչական շենքի տարածքում և ի հայտ եկած առերևույթ խախտումների և խնդիրների մասին զեկուցել վերադասին,
8. մասնակցել եմ Ծառայության աշխատակիցների՝ վարչական շենքի տարածքից դուրս կայանվող տրանսպորտային միջոցների վերաբերյալ ցանկի կազմմանը և կայանման թույլտվությունների բաշխմանը,
9. կատարել եմ Ծառայությանը վերաբերող ընթացիկ տարաբնույթ հանձնարարականներ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության
ներքին անվտանգության և հսկողության
բաժնի փորձագետ՝ **Ժ.Դուրգարյան**

13.02.2026թ.